

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎՐԱՅ

(Տես Հաս. ԽԱ, էջ 50, 155):

#### ԳԼՈՒԽ Ե.

Թագաւորէ Երուսաղէմի Հայս, արշակի՛ ՚ի յիյս, և սպս սպանահի՛ ՚ի Սմբատայ — Միտրսանկայ Վրաց ընդ հիստիսային ազգաց՝ դիտեն՛ ՚ի Հայս, և հարկահին՛ ՚ի Սմբատայ քայս, որ և նուսնէ գերկիր ճոցս — Կրկին անգամ սպստամբնայ Վրաց՝ գերեն զՏարեն, զորդի Արտարսանայ (Արտաշիսի) արքային Հայոց, այլ տագնայեայ ՚ի Սմբատայ՝ խնեարին՛ ՚ի հաշտոյրին և ՚ի ծառայոյրին:

Յետ այտոցիկ՝ թագաւորեաց Հայոց մեծն Երուանդ, և էառ ՚ի Վրաց զԱրտահան, մինչև ցիւր գետ, և զբազա-

1 Ի նախնեթացն տողք են պակասն յայտ նապէս ՚ի հայրուսմ, զորս այպէս ունի Վսիթանգ. « Ի մեռանել Բորտոսայ և Քարթմառայ՝ որդիք նոցին փոխանակեցին զտեղն նոցա. Փարսմառ՝ Արմազ. և Կայոս ՚ի Ներքին-Քարթլէ (՚ի Նիտա-Քալաբի). և որքայք Վրաց կա յին ՚ի հնագանդութիւն թագաւորացն Հայոց՝ Ագրկայ սկսեալ », և այլն:

2 Երկուստաներորդ արքայութիւն, քարթլութիւն, ամբ թագաւորութեան 18. Յ. Ք. 72-87: Այս Փարսման, ըստ վկայութեան Խորենացայ, « ընդ զորացն իւրոց՝ յանգուզն յարձակմամբ յառաջեալ բարեկն ընդդէմ բանակին Արտաշեսի, այլ ՚ի պարտել Երուանդայ՝ և սորա ՚ի փախուստ գառնային. քանզի և ոչ սերտ միաստութի կարէին ունել ընդ Երուանդայ, զինու զորութեամբ բառնացելոյ ՚ի վերայ երկրի նոցա. ոյր վասն, ըստ բանից պատմելիս Կրտայնեայ վճարեցին զկեանս. չկարացեալ կրկին անգամ թափել զայնտոսիկ ՚ի Հայոց. զորոյ զփորձ փորձեալ յարքացն՝ պատուհասին ՚ի Սմբատայ Գաղէ:

Այն ինքն Փարսման մասն կայաւ և ՚ի պատերազմունս անդ, զորս մեկաց Տիբեր կայր ընդդէմ Արտաշեսի (Արտաւանդ, ըստ Տակիտեայ) որդւոյ Արտաշեսի, առ ՚ի հաստատել ՚ի քահ արքայութեան Պարթևաւ զՏրսատ՝ զազգահան նորին Արտաշեսի. ոյր վասն հայտնցուցեալ նախ զՓարսման ընդ եղբոր իւրում Մինդրատայ, և ՚ի ձեռն վերջնայ ննջաւ տրուսայ սպանանել զԱրշակ զորդի Արտաշեսի, որ կացուցեալ էր սորա թագաւոր ՚ի վերայ Հայոց, սպա գրգռեաց և զՓարսման ՚ի թիկունս կալ էղբոր իւրում Մինդրատայ ընդդէմ Արշակի (ըստ Տակիտեայ) որդւոյ Արտա-

ԳՐԱԿ. Գ.

շին Մոնդայ. և բնակեցոյց ՚ի նմա մարդ գիււախօս, և անուանեաց զնա Քաշատուն: Եւ մեռան թագաւորքն Վրաց արտմութեամբ, Փարսման և Կայոս<sup>2</sup>: Իսկ Սմբատ Բիւրատայ՝ սպան զԵրուանդ, և թագաւորեցոյց զեղբայր նորա զԱրտարան<sup>3</sup>:

Յայնժամ թագաւորքն Վրայ՝ Աղուկ և Ազմայէր<sup>4</sup>, կոչեցին յօղևութիւն ըզլիկաց և զՊայս թագաւորքն, երկու հորարք, զԲագուկ և զԱնբագուկ: Եւ ածին նոքա ընդ ինքեանս զՊաճանիք և զՋիկք, զԽորձուկք և զԻրգոք. և

շիսի, զոր հարուստ բանակաւ առաքեալ էր հօր նորս ՚ի վերայ Մինդրատայ՝ խնդրել զլրէժ ուրեանն Արշակայ, և կարծել զնա ՚ի բռնակալութենէն: Յայսմ մարտի բազում արուժիւնս ցուցեալ Փարսմայ, պատմի ՚ի Տակիտոսէ, որ և ոճով գրէ զհանդերձանաց մարտին երկուստեք. զորքն իւրաքանչիւր ճակատուցն, և զԱրշակէ վերաւորելոյ ՚ի հարուստոյ Փարսմանայ և մագապուր զերմելոյ ՚ի մօտուանէ. որով և ՚ի ձախողել իրացն Արտաշեսի ՚ի Պարսկաստան առաւել ևս զօրացեալ, հաստատէ զՄինդրատ զեղբայր իւր թագաւոր ՚ի վերայ Հայոց, որ « զարուժեամբ հռովմեական զօրակալին, ըստ Տակիտային », նուսնէ զամուրս բարձունս, և զբաշտայինս՝ ասպատակութեամբ Վրաց: Ի Բայց, աւաղ, զի ոչ իսպառ անարատ պահեաց Փարսման զբարձութեանն անուն. զի զկին ամաց ինչ նախ ՚ի ձեռն Հաւանդի որդւոյ իւրոյ՝ դարան գործեալ կեցաւ Մինդրատայ՝ կաշտակուր անձեւելով զմերձաւորս նորին, հարմածական վարեաց նա ՚ի թագաւորութենէն. և սա պատճառաւ ուխտի խաղաղութեան կոչեալ Հաւանդի՝ նեղեղով նմա ՚ի ժամ ուխտինց և ՚ի կապանս արկեալ էած առ Փարսման, զոր անգիկ հրաման ետ հեղձամահ աննել և ոչ տեսանել անգամ կամեցեալ զերեսս նորս: Ի արձանս սոյն ինչն Փարսման, զորմէ վկայէ Տակիտոս թէ քան զսպանել էր ՚ի նմա իղձ իրանութեան քան զսեր եղբոր և գասեր, և սիրա նորա պատրաստ յիղեան ամենայն յ, յետ ամաց ինչ սպան և զորդի իւր Վասմիդք, որպէս գաւաճան զգր, յետ փախստական անկանելոյ սորա ՚ի Վիրս յերեսաց սպատամութեան Հայոց, հանդերձ քաշարի հաւատարիմ կնաւ իւրով Զինոբեան, զոր Հաւանդի յաղբոր նորա զընէալ, առ ՚ի փրկելոյ

14

զորքն վրաց առ հասարակ 'ի մի վոյր եկեալ, մտին յանկարծուստ յաշխարհըն Հայոց, մինչդեռ անկազմ կային նորա, և գերեցին զՇիրակ և զվանանդ մինչև ցաասնն. և դարձան 'ի դաշտն Նախաշառանու, և առին ուար բազում. և ելին ընդ դուռն Փառհսոսոյ, և փութով անցին ընդ կուր գետ. և երթեալ 'ի կամբէճ, բանակեցան 'ի վերայ իօրի գետոյն<sup>1</sup>: իսկ Սմբատայ ժողովեալ զզորս Հայոց, չոգաւ զկնի նոցա մինչև ցկուր գետ. և որձակեաց գետպանս, և ասէ ցնոսա. Չոր սպանիք 'ի Հայոց՝ թողեալ ձեզ, և զոր ունիք առ և աւար ձեզ լիցի. բայց գերի՝ զորս ունիք կենդանի այսրէն գործուցէք, իսկ նորա հպարտացեալ խտառչոյնս պատասխանեցին նմա, որպէս թէ դառնալոց են 'ի վերայ՝ զի զնա ևս առնուցուն: Եւ լուեալ Սմբատ՝ էանց ընդ գետն կուր, և դիմեաց առ նոսա առիւծաբար: իսկ թագաւորն Օտայ՝ բազուկ խնդրեաց մենամարտիլ ընդ նմա, և մեռաւ 'ի ձեռաց նորա, անցուցեալ զհիզակն թափ ընդ լանջն կանգուն մի: Եւ եզրայր նորա Անբազուկ զիմեաց ընդդէմ նորա. և զնա ևս եհար նիզակաւ և անկաւ մեռեալ. և ասէ. վրէժխնդրութիւն լիցի այս Հայոց կա՛նանց և անմեղ մտնկանց՝ սպանելոցն 'ի ձեռաց ձերոց: Եւ խառնեցաւ ամենայն բանակն ընդ միմեանս յոյժ ահաւորապէս, և անկան յերկու կողմանց անթիւք մինչև ցերեկոյ. և պարտեալ հիւսիսայնոցն զիսխուստ առին. և յանխնայս խոցոտէին ընկենուին 'ի նոցանէ զորքն Հայոց, մինչև ցմալ

յոյժ սակաւուց, զորս գիշերն ապրեցուցանէր: Եւ թագաւորն երկրորին վրաց խոց առած՝ զերծան անկան 'ի Մցխիթա: իսկ Սմբատ յաշոգութիւն մտեալ 'ի Քարթլ՝ աւերեաց զերկիրն. և շինեաց բերդ մի յերկիրն Անձըրխոյ՝ զՍամյխէ, և եթող անդ զորս օգնականն Ծուռդաւուցն՝ որք հնապանդեցան նմա:

Իսկ թագաւորն վրաց Արզուկ և Ամգիէր, առեալ ընդ ինքեանս զՕսաց ազգն, հարկանէին զերկիրն Հայոց՝ առ դետողն Նուստէ, և առ Պարխարաւ՝ որ են Այաք, և առ ճանապարհին Աշոցայ<sup>2</sup>: Ապա թագաւորն Հայոց Արտաբան խաղաց 'ի վերայ վրաց, և նըստաւ 'ի վերայ Մցխիթայ հինգ ամիս, քանդելով զաշխարհն, մինչև յողջ անկեալ խնդրեցին զհաշտութիւն, զի ծառայեսցեն նոցա վիրք և Օղբ: Եւ լուաւ նոցա, և եղ հարկս, և գնաց 'ի նոցանէ թագաւորն Հայոց, և գոռայր ընդդէմ Յունաց և Պարսից: Եւ պարապ առեալ վրաց և Օսաց, ասպատակէին 'ի Հայս<sup>3</sup>: Եւ Արտաբան առաքեաց զորդի իւր զՉաքէմ ընդդէմ նոցա սակաւաձեռն. և նորա զնացեալ՝ իբրև վամնակ ըմբռնեցաւ 'ի նոցանէ 'ի տեղին՝ որ կոչի Յիլիս լիճ. և կամեցան Օղբն սպանանել զնա վասն արեան իւրեանց թագաւորացն, և արգելին վիրք, զի առցեն նովաւ զուհմանս իւրեանց՝ զոր առեալ էին Հայք. և արգելին զնա 'ի Դալարա: իսկ Հայք ոչ արարին փոյժ զամն երիս. ապա զկնի ամաց երկց զնաց Սմբատ որդուովք թագաւորին, Արտաազաւ և Տիգրանաւ, և ամե-

զնա 'ի թշնամանաց գերութեան, խոցեաց սուսերաւ և քորչեալ ընկէց յերասիս գետ հետախաղաղ առնել և զգի նորին: Չայցանէ մանրապատում ասանդէ Տախտոս 'ի Տարեգիրս անդ իւրում:

3 Թոր. Յայսմ տեղուք միայն Արգաթա, իսկ այլուր միտ Արգաթա, որ նոյն կնքն է Արտաշէս. ոչ եւ Էթր Նուռանդայ, այլ ընդ ազգակնք արշա կուծի, եթէ ոչ զՎանասորով հայր համարիցիմք ևս և աղկորդոյն Նրուանդայ:

4 Երեքտասաներորդ արքայութիւն, բարթոլոմէան, ամբ թագաւորութեան 16. Յ. Գ. 87-103.

1 Այս արշաւանք վրաց 'ի Հայս՝ նոյն թուի ընդ յիշատակելոյն 'ի Խորենացոյ՝ միաբանու թեամբ ազգին Ալանաց, որոց « յինքեանս արկանելով և զկէս վրաց աշխարհին, մեծաւ ամբոխիւ տարածեցան ընդ աշխարհս մերս:

2 Նոյն խառնակութիւն է Ապոյ և Ապոյ անուանոյ՝ զորոց սասցաք այլուր 'ի վեր անդր:

3 Չայս ասպատակութիւն արարեալ թուի վրաց, յապատամբել անդ քանի մի գաւառաց և ծովի զերեկոյ և կարսից երկիրն յԱրտաշէս մերմէ, 'ի կամել սորս կացուցանել 'ի գահ հորն զՏանուռն իւր զԱրտաշէս, որդի Արշակայ Պարսից արքայի:

նայն զօրօքն Հայոց յերկիրն թուեղաց<sup>1</sup>,  
 Իսկ թագաւորքն վրաց ամրացան, և  
 գաղթեցին զերկիրն, և խնդրեցին ըզ-  
 հաշտութիւն, տալով ՚ի նոսա պատուով  
 զորդի թագաւորին, և խոստացան ծա-  
 ապարտիւն այսպէս. Զդրամն զրով և  
 անուամբ Հայոց թագաւորին վարել, և  
 թէ գայ թշնամին ՚ի վերայ ձեր, երկո-  
 քին թագաւորքս վրաց կեամբ և մե-  
 ռանիմբ ընդ ձեզ. և եթէ դուք երթալք  
 ՚ի պատերազմ ընդ այլում ազգի, տասն  
 հարար սպառազէն ՚ի վրաց գան ընդ-  
 ձեզ: Եւ հաւանեալ այսմ Հայոց, ան-  
 դրէն դարձուցին զտեալ սահմանն  
 վրաց, զԻրոնդա, զԻմուխ, զՋաւխէթ  
 և զԱրտահան. և եղեն Հայք և վիրք և  
 Օսք ազգ մի:

ՎԼՈՒԽ Զ.

Յուդոդոսիոն բազադոսքեան վրաց, և  
 եկեղաւոր ճնարք Միւրղատայ ՚ի սպանորիւն  
 փարսանայ, և մահ նորին ՚ի Հայոց. —  
 Արշաւանք Օսաց ՚ի վիրք, և նուսնումն եղտ  
 ՚ի ձեռն Համազասպայ վրաց սրբայի: —  
 Ապստամբութիւն Համազասպայ ՚ի Հայոց, և  
 մահ նորին: — Թագաւորեալ վիրսնի ՚ի վե-  
 րայ վրաց՝ սակ բարեկարգութիւն:

Կատարեցին զկեանս իւրեանց ասա-  
 ցեալ թագաւորքս վրաց: ԲԱրմազ՝  
 թագաւորէ<sup>2</sup> Համազասպ, և ՚ի ֆար-  
 թըլ՝ Դերուկ<sup>3</sup>, և զկնի սորա փարս-  
 ման և Միհրդատ<sup>4</sup>: Այս Միհրդատ  
 էառ կին պարսիկ՝ յազգէ թագաւո-  
 րաց, և ՚ի խրատուէ Պարսից եղև ա-

1 Աւանդէ Խորենացի զՋարհէ լինել « այր  
 սէգ և յորս էրէոց նահասակ, իսկ առ պատե-  
 րազմունս՝ վատ և տաղտուկ. զորոյ զգործ ա-  
 ռեալ ֆարձամայ որումն սրբայի վրաց, ապ-  
 ստամբոցուցանէ զերկիրն, և կապեալ զՋարհէ՝  
 ՚ի բանտի զնէ ՚ի Վաւկաս: Ընդ որում պատե-  
 րազմեալ Արտաւազգայ և Տիրանոյ հանդերձ  
 Սմբատաւ, գարձուցանեն զեղ քայրն ՚ի մեծ կա-  
 պանաց և ՚ի բանտն ». յորմէ յայտնի երևի  
 փոփոխումն անուանն Տիրանայ՝ ՚ի Տիգրանի  
 վրաց պատմէս. բայց զոր դժուարին է միաբա-  
 նել, որպէս ՚ի բազում դէպս վրաց պգիս մե-  
 րոյ, այսպէս և յայսմ՝ է համեմատութիւն ժա-  
 մանակաց. քանզի ֆարձամն յիշեալ ՚ի Խորե-  
 նացուցն մերձաւորութիւն հնչման ցուցանէ ընդ  
 ֆարձամայ, որ առաջին եկաց թագաւոր յԱր-

տեցոյ փարսմանայ Արմազեցոյ, և  
 խորհեցաւ սպանանել զնա ՚ի զինուոյ  
 ՚ի տան իւրում: Եւ իմացեալ փարսմա-  
 նայ՝ ոչ գնաց ՚ի կոչ նորա, և յայտնե-  
 ցան իրքն, և եղեն թշնամիք միմեանց:  
 Եւ էր փարսման ոյր բարի, և գեղեցիկ  
 ՚ի դէմն և ՚ի հասակ, և սղբմած և ի-  
 մաստուն և քաջ պատերազմաւ իրև  
 պանմարմին. և ամենայն վիրք սիրէին  
 զնա, և ատէին զՄիհրդատ. վասն ո-  
 րոյ փախեաւ ՚ի Պարսս, և փարսման  
 կացոյց ՚ի տեղի նորա զՓանուազ  
 սպարապետն իւր՝ կոթմակից և հա-  
 մուհասակ և քաջարի այր: Եւ Միհրդ-  
 դատ առեալ զՊարսս՝ եկն ՚ի վերայ  
 փարսմանայ. և փարսման ածեալ զօր ՚ի  
 Հայոց՝ չոգաւ ընդ առաջ նոցա ՚ի Հրին-  
 սի իտեռ որ է երկաթածոր: Եւ խն-  
 դրեցին մենամարտիք ՚ի Պարսից՝ ըզ-  
 փարսման և զպարապետն իւր. և  
 սպան փարսման եօթնետասն այր, և  
 սպարապետն՝ արս քսան և երիս: Յայն  
 ժամ այր մի ՚ի Պարսից, Զիւանչէր ա-  
 նուն, հսկայ և անճոռնի՝ խնդրեաց ըզ-  
 փարսման. և նա ել խնդութեամբ ընդ-  
 գէմ՝ նորա: Եւ նման էր մարտ նոցա ո-  
 րոտման ամպոց, ժամն բազում, ա-  
 կայն գեղեցիկն այն կորովին փարսման՝  
 հարեալ ընկնոյր և սատակեր զան-  
 արի հսկայն. և ձոյնէր առ զօրն ասելով.  
 Արիք հայպս առիւժքք որ ննջէք, մա-  
 տիք ՚ի յոյխարսդ կոչկոճեալս ՚ի կար-  
 կրատ: Յայնժամ զօրքն Հայոց և վրաց  
 յանխնայ զնէին զամենայն Պարսիկան  
 արեան ճապաղիս ընդ երեսս երկրին:

մազ. այլ յիշեալքն ՚ի պատմէս Արզուկ և կամ  
 Ազգեթր (Ազգայէր), ամենեկն օտար են ՚ի ֆար-  
 ձամայ. բայց միայն մնայ ասել զի ֆարձամ ընդ  
 իցէ ստոյգ անուն Ազգեթրի. քանզի վերջնս կո-  
 չն ՚ի ֆարզուածոյան վարժանդայ Արմազէլ, զոր  
 ըստ Պրոտէի՝ պարս և համարել վարեալ մաշ-  
 գորէն, այն է Արմազեցի:

2 Յօր. Թագաւոր:  
 3 Զորեքտասաներորդ արքայութիւն, քար-  
 թըրտեան, ամբ թագաւորութեան 10, Յ. Ք.  
 103-113:

4 Հնդկաստաներորդ արքայութիւն, քար-  
 թըրտեան, աք իշխանութեան 16, Յ. Ք. 113-  
 129:

5 Յօր. զարբ:

Եւ զերծեալ Միհրդատ անկաւ 'ի Պարսս :  
 Եւ 'ի յերկրորդ ամին կրկին զօրաց բազմութեամբ դարձաւ 'ի վերայ փարսմանայ . և եկն 'ի Մցխեթա , և նստաւ անդ :  
 Եւ նոյնպէս ինդրէին ախոյեանք Պարսից զփարսման և զսպարապետն իւր :  
 Եւ սպան 'ի նոցանէ փարսման երկուտասան այր , և սպարապետն իւր վնասասան այր . և ապականաւ <sup>1</sup> 'ի նոցանէ սակաւուք , և կոտորեաց և ջնջեաց զբազմութիւն նոցա : Եւ փախեալ Միհրդատ 'ի Պարսս : Եւ ինքն քաջն փարսման ուժոյն Հայոց տուերէ և քանդէր զՊարսս : Որոց մտեալ 'ի հնարս , առաքեն այր մի խորտկարար՝ հատուածի պատճառով , տուեալ զնա զեղ մահու , զի յանկասկածս սպանցէ զփարսման . զոր և արարն իսկ , և սպան նենդիւ <sup>2</sup> զամենայնաղթն քաջ , և լացոյց զտունն վրաց 'ի փոքունց մինչև ցնեծամեծս : Եւ սպարապետն փարսմանայ փառնաւազ՝ առեալ զկին և զորդիս փարսմանայ գնաց 'ի Հայս <sup>3</sup> . և օգնութիւն նոցա եղ զառառապետ յԱրմազ և յամենայն բաժին նորա , որք պահեցին զմիամտութիւնն փարսմանայ : Իսկ Միհրդատ առեալ զՊարսս՝ եկն 'ի Վիրս , և առ զմասն իւր : Եւ թագաւորն Հայոց հաշտեալ ընդ Յոյնս՝ չողաւ ընդդէմ Պարսից և Միհրդատայ , և պատահեաց նոցա 'ի վերայ Լեխ գետոյն , և սպան զՄիհրդատ և զիշխանն Պարս :

սից , և թագաւորեցոյց վրաց զորդին փարսմանայ՝ զԱլլաի <sup>4</sup> , որ կեցեալ ամս երկու մեռանի , թողեալ որդի երախայ . և նովաւ իշխէր վրաց՝ կինն փարսմանայ :

Եւ զլին նորա թագաւորեաց Համազասպ թուոն նորա , այր քաջ և պատերազմող : Յաւուրս սորա ելին Օսքն բազմութիւն յոյժ յանկասկածս ընդ ճանապարհն Դուալեթոյ . և նստան 'ի վերայ Լեախ գետոյն աւուրս ութ , և հանդեան . և ապա չողան նստան ըզՄցխիթա քաղաքաւ : Իսկ Համազասպ վնասասան հազար հեծելօք , և երեսուն հազար հետեակօք <sup>5</sup> ելեալ կուուէր ընդ նոսա նետաձգութեամբ 'ի հեռաստանէ : Եւ ինքն ձդեաց յընտրելոցն ախոյանից հնգետասան այր՝ կորովութեամբ աղեղան . և միւս օրն ընկէց 'ի յՕսայն այր մի թօնախուս անուն , և երեկ զմէջս նոցա . և յերրորդում աւուրն , զի աճեցին <sup>6</sup> զօրքն վրաց , մարտեան ընդ միմեանս . և պարտեցան Օսքն , և մեռաւ թագաւորն նոցա , և փախեան մնացեալքն յաշխարհն իւրեանց : Եւ յերկրորդում ամի առեալ զօր 'ի Հայոց <sup>7</sup> Համազասպ էանց յայնկոյս լերինն 'ի վերայ Օսաց , և գերեաց զաշխարհս ամենայն , և դարձաւ 'ի տուն իւր :

Զկին այսորիկ հպարտացաւ յանձն իւր Համազասպ , և ապստամբեաց 'ի

1 Յօր. Այսպէս խառնակ է իմաստք և անիմանալի :

2 Աստանօր չգիտեմ զիւրք ընթեանու Պրուսէ Էնթու զԷնֆուս , զի թարգմանէ . Ille tua d'une fièche :

3 Կինն փարսմանայ , ըստ աւանդութեան Վախժանեացոյ , էր դուստր արքային Հայոց . այլ չէ ինձ մարտ իմանալ զով ոք 'ի թագաւորաց մերոց կամիցի նշանակել , զԱրտաշէս , էթէ զԱրտաշատք կամ զՏիրուս . զի և պատմիչս յիշէ զնոյն թագաւոր Հայոց հաշտեալ ընդ Յոյնս (իմա զՀառովմայեցիս) և մարտուցեալ ընդդէմ Պարսից : Առաւել հաւանական երևի ինձ ստել զՏիրուս . որոյ՝ ըստ վկայութեան Խորենացոյն , հարեանիւտիք ծառայելու Հառովմայեաց , առ Անտոնի նոս Պիտուի . չկարէր 'ի իսաղանութեան միտ լինել ընդ Պերդիւս Վարդգեսի արքային Պարսից , որ և ընկալաւ զՊերդիւս անուն՝ յաշխու՝ վասն աւուր արշաւանացն իւրոց 'ի մասին Հառովմայե :

ցւոց , առ Մարկոս Աւրելիոսի :

4 Վեշտասաներորդ արքայ . քարթլոսեան , իշխեաց զամս երկու , 129-132 Յ . Ք . և մայր նորա ամս 14 , 132-146 Յ . Ք . : Յետ որոյ յարբուսն հասակ երկխային , որ կոչէր Փարսման՝ յանուն հաւուն իւրջ , եկաց եօթննասաներորդ արքայ , և կալաւ զիշխանութիւնն զամս 36 , 146-182 Յ . Ք . յորում ամի մեռաւ , թողեալ զտէրութիւնն 'ի ձեռս Համազասպոյ քարթլոյ իւրջ . որ եղև ութնասաներորդ արքայ քարթլոսեան , և իշխեաց ընդ ամս 4 , 182-186 Յ . Ք . :

5 Վախժանգ ունի երեսուն հազար հետեակօք և տասն հազար հեծելօք :

6 Պրոսէ ընթեանու հաճեցաւ ( ils consentirent ) :

7 թերևս առ Տիրգանու Երրորդի կամ մաւնաւոնդ առ Վաղարշ արքայիւ մերով , որ զամենայն աւուրս իւր հաշտեական վարէր զօգտս հիւսիսոյ , յորոց և սպանաւ իսկ :

Հայոց . և սպան յիւրոյնն արս երեւելիս, և ապաւինեցաւ 'ի Պարսս : Եւ վասն այսորիկ առեցին զնա վերք, և խնդրեցին իւրեանց թագաւոր՝ զորդի թագաւորին Հայոց զՎրոյն՝<sup>1</sup> զքեռորդի Համազասպոյ : Եւ լուաւ նոցա թագաւորն Հայոց, և եկն 'ի վիրս : Եւ եկին տա նա իշխանքն արիմտից կողմանն հնդեքեան, և իշխանն Ռենձրխեւոյ և իշխանն Ծունդայ . կոչեցին և զգորսն Օսաց, և եկին խնդութեամբ վասն վրիժուց արեանն՝ զոր պարտէր նոցա Համազասպ : Կոչեաց (Համազասպ) յօդնութիւն զտունն Պարսից . և եղև պատերազմ սաստիկ, և յաղթեցաւ Համազասպ, և սպանաւ 'ի պատերազմին, և հարան զօրքն Պարսից :

Եւ թագաւորեաց Վիրոն<sup>2</sup> 'ի վերայ վրաց, և ածաւ նմա 'ի կնութիւն յերկրէն Յունաց դուստրն Լողթացոյն, որում անուն էր Սեփելիա . նա երբ զպատկերն Ափրոզիտանոյ, և կանգնեաց զնա 'ի զուխն Մցիլիթոյ : Եւ էր թագաւորն ողորմած և նեղելոց վրէժխնդիր . և սակաւ ինչ տեղեկացաւ Տեառն մերոյ տնօրէնութեանն՝ սիրէր զբրիտոսս, և արգել զմարդազոհութիւնն 'ի վրաց . սակայն երկըրպաղէր կոտց և զոհել տայր արչառս և ոչխարս : Եւ կոչեցաւ անուն նորա Բէվ, որ ասի Յաղթող . և փոխեաց զսա որդի իւր Վաչէ<sup>3</sup> :

1 Վրոյն այս որդի է Արտաշէսի և Ստեփանի . ոչ յիշն ի խորհանցոյ . այլ ի պատմութեան Նահապետութեանն Ոսկեանց, յորմէ անունն և Յայամաւուրք մեր, և ասեն . « Իսկ որ . զիք թագաւորն Վրոյնն Վրոյն . . . ստիպելին » զուրք Ոսկեանքն՝ ապա նոցա (Սուքիասանց) :  
 2 Հրաման՝ գառնալ առ թագուհին . և սորա աւան . Խնքեանք ընտրեացն զօրուսն իւրեանց :  
 3 Ընդ որ բարկացեալ որդիք թագաւորին՝  
 4 ՂՍփեանքն Վասպենին, և զԲահադրաս ընկերքն :  
 5 Իւրովք թողն, երկուցեալ ի մերէն իւրեանց :  
 6 զԻսաղահանք էին սիկնոքն Ստեփանայ . վասն « որոյ ի նոս ինայեցին » :

2 Իննևտասներորդ արքայ, արշակունի, իշխեաց զամս 27, Յ. Ք. 186-213 :  
 3 Վաչէ եկաց քանի՜րորդ արքայ, արշակունի, ընդ ամս 18, Յ. Ք. 213-231 . յետ որոյ թագաւորեցին Արշակունեաց՝ որդի նորա Բա-

### ՎՂՈՒԽ Է .

Յազոգս բառաւոյ սցցին Արշակունեաց յԱրտաշէս, և վասն պատերազմացն և դասադիր սպանմանն խորսովոս Հայոց արքայի — թագաւորն Միհրսևոյ 'ի Վիրս, և պատերազմուք նորս ընդդէմ Հիւսիսայնոց : Եւ ասեցէ Միհրսև գաւառս ինչ զկնի մանուսն Արտաշէսի, և վերսպա պատերազմուք նորս ընդ սցցացն ռիսիսոյ — Դարձ Տրդատայ 'ի հայրենի քաղաքուրիսն, և ընդ կոստանդիանոս մարտ ստեալ ընդդէմ Միհրսևոյ և Պարսից՝ ստիպէ զնսին 'ի հաշտութիւն և ծառայութիւն :

Յայնմ ժամանակի թագաւորեաց Պարսից Գարսէ-Շարվան, որդի Սասանայ, որ եբարձ զԱրշակունիս, որ կոչին արդ Բիւրք<sup>4</sup> : Եւ թագաւորն Հայոց խորով կուռէր ընդ նմա՝ օգնականութեամբն Ասպարազուրայ<sup>5</sup>, որ ածէր ընդ դուռն կովկասու զԼեխս և զԼեկս և զՍաս և զտաղիրս՝ առ թագաւորն մեծ խորով : Եւ մտանէր նա բազմախուռն ամբոխիւ 'ի Պարսս, հարկանէր զգորսն Պարսից . և փախստական լինէր թագաւորն Պարսից Գարսէշար, որ նա ինքն է Արտաշիր : Խորհէր այնուհետև ընդ մեծամեծս իւր թէ զինչ արացեան յերեսաց թագաւորին Հայոց, որ տանն ամ նեղէր զնոսա : Ապա յառաջ եկաց ոմն ազգային խորովու, անուն Անակ կոչեցեալ, և ասաց 'ի լուր ամենեցուն . Պարսս է քեզ ծառայել հարկաարութեամբ խորովու, և հան-

կուր, շէտ արքայ 15 ամ, 231-246 Յ. Ք. և զհին որդի սորա Միհրքատ, 22 արքայ, զամս 16, 246-262 Յ. Ք. և յետ այնորիկ որդի նորա Ասպարազուր կամ Ասպարազուր, զորմէ խօսի պատմին 'ի յաջորդ զԼուիս բանեցն, զանց զսառաշնովն արքայու :

4 Խառնակութիւն երևի աստ իմաստիցն : Պրոսէ կամ ընթեանուլ որ իշխ Արտէրէոյս . և ասէ կրնալի սխալուլ Հայ թագաւորն, նախ փոխանակ ընթեանուլ զվրացերէն բառ արքայ . ընթե, վրէպ ընթեւրցմամբ նմանաձև տառն միջ ընթեւրցալ ասէ, արտէրէոյդ . և երկրորդ՝ զյառաքերկանն որ ընծայէ Արշակունեաց, միջգետ վերաբերի առ որդին Արտաշայ, որով պարսէ և ընթեանուլ որ իշխ Արտաշէս :

5 Գասներորդ երրորդ արքայ, արշակունի, իշխեաց ընդ ամս 3, Յ. Ք. 262-265 :

դարտին Պարսք 'ի չարեաց նորա: Եւ գաղտ մերձեցեալ յականնս նորա՝ աւսաց: Երթմայց առ նա ընտանութեամբ սիրոյ, որպէս ապատմիեալ 'ի քէն, և սպանից՝ զնա նենդութեամբ: Չոր և արարն իսկ: Եւ եկն առ նա հանդերձ եղբարքն իւրով: Եւ 'ի գալ միւսոյ աւմին՝ 2 'ի յորս սպան զնա, յորժամ կամէր ելանել 'ի Պարսա: Եւ մեռա ինքն և իւրքն ամենայն, բայց 'ի յերկուց տղայոց, զոր առեալ գայնկոյն՝ փախեան ամն 'ի կողմն Յունաց և ամն 'ի Պարսից:

Եւ լուեալ զայս թագաւորին Պարսից՝ և եկն 'ի Մցխիթամ<sup>3</sup>. և ետ նոցա երգումն, և թագաւորեցոյց նոցա զմանուկն Միհրան<sup>4</sup> հնգամեայ<sup>5</sup>. և կացոյց գաւառապետ և սնուցող տղային զգայեակն իւր զՄիհրվանս, թողեալ առ նմա քառասուն հազար յլնատիր արանց Պարսից. և սացա՝ հինգ հազար<sup>6</sup> 'ի նոցանէ լինել առ թագաւորին, և այլն նստցին 'ի Հերթի, և կրուիցին ընդ խազրաց, և զի պաշտես.

1 Յօրինակին պակասի և սպանից:  
 2 Խորենացին ունի: « Եես անցանեայ երկուց ամաց՝ յերրորդումս սպանեակ զԽորով: »  
 3 Աստուծ յօրինակի մերում պակասեն տղք ինչ, որով անկցորդ ընդ առանցն մնան բանքն, զորս առեալ 'ի Պարսեայ թորգմանմբ 'ի հայ: »  
 4 Եւ լուեալ զայս արքային Պարսից՝ եկն 'ի Հայս, և կտորեաց զամենայն սասնն Խորովան: որոյ որդի մի միայն՝ Տրգաս անուն, զերծաւ առ Յոյնս: Իսկ Ասպակուրայ՝ արքային Վրաց, անցեալ յաշխարհն Օսաց՝ առ 'ի ժողովել իւր զորս, անդէն մեռաւ: Եւ զի չէր նորա զուակ արու, այլ գուսար մի միայն, շինաւ այնու սոսնն Փանուաւաքանց, որոյ զկնի Արչեք սանդրի՝ քսանուսի համարին թագաւոր: — Եես այսորիկ ժողովեցան աւագային Վրաց 'ի Մցխիթամ, առ կուսակաշն Մաժան, գիտել ըզիր նուրգս մեաց նորս. որոց ետ պատասխան: Ի՛, զի եթէ գեռ և կենդանի կայր արքային մեր՝ զզուխս մեր քնեաք 'ի վերայ նորա, և եթէ ապրելու էր մեզ ժառանգ արքայութեանն՝ աւագայեալք՝ 'ի բերգս մեր՝ և զմեռելտիտս անգամ, եթէ հարկ 'ի վերայ կայր, ուսեւ յամեն տունուաք, որպէս և հարքն մեր: Եւ զի 'ի զուր եւ արք այս անկայ, ինչդիր արաստաւ սո թագաւորն Պարսից՝ զհարձարգւոյ նորին զՄիհրանայ՝ տայ մեզ զնա 'ի թագաւոր և 'ի փեսայ Արքայ: զստեր արքային մերոյ Ասպակուրայ: Ը՛, որ համարենք զսեալ ասանին՝ հրեշտակ աւագեցին առ թագաւորն Պարսից սանել:

ցէ որդի նորա զՏուր, և երկիր պագցէ կուսոյն Վրաց. քանզի զայն հայոցեցին վիրք՝ զի մի հանցէ զնսա 'ի կրօնից իւրեանց, զի լաւ է, ասնն, մեռանել մեզ, քան 'ի բայ կալ յօրինաց հարցն մերոց, Եւ խաղաց թագաւորն Պարսից, և գնաց սա ստորտովն հովկասու յաշխարհն իւր, գերեթով զժորժորս լերինն: Իսկ Միհրանս սնեալ և հասեալ յարս՝ սիրեաց զվիրս, և նոցա լեզուան վարէր, և երկրպագէր հինգ<sup>7</sup> պատկերաց աւրնթեբ կրակարանին: Եւ 'ի հնգեասասան ամի նորա մեռաւ կինն. և բերին նմա կին 'ի Պոնտոսէ՝ զՄննա՝ դուսար Ուրտոսի: Եւ միշտ կուռէր Միհրան ընդ խազիրս. քանզի նանս եղին խազիրք առնուլ զԴարբանդն, և բանալ զգուռն զայն, և ելանել 'ի վերայ Պարսից. և ոչ տայր նոցա թոյլ Միհրան:

Ի քառասուն ամին սորա մեռաւ հայր նորա Արտաշիր, և էառ զԹագաւորութիւնն կրտեր եղբայր նորա Բարտամ<sup>8</sup>: Եւ յորժամ լուաւ Միհրան՝<sup>9</sup>

զի սիրորդն արքայազուն և յարենն Արթակուռնեաց կամ Արշակունեաց և Փանուաւաքանց, որպէս և Երրորդեանց, և զի մերձաւորք են նոցա սահմանք Օսն և Ալանք և Լեկք և Սնք և Սազանք, և ոյլ ամենայն արգք հիւսիսոյ: Ընդ որ հանաւ արքային Պարսից՝ եկն 'ի Մցխիթամ, և եմուտ յուխտ ընդ նոսա՝ և այլն: — աստի և անդ յաշորդն բանք սօրնակի մերում:

4 Չորրորդ հարատուութիւն, Ասասնեան կամ Խորովեան Միհրան եկաց քսաներորդ շորք արքայ, Խորովեան, ընդ ամս 77, Ե. Գ. 265-342:

5 Վախժանդ քնէ եւնեակոյ. շինութեան թուի 'ի հայոսմ ընդ Ե և ընդ Է:

6 Վախժանդ ունի եօն հազար. դարձեալ խառնակութիւն 'ի հայոսմ ընդ Ե և ընդ Է:

7 Դարձեալ և աստ վրայ ընթերցումն է և է աստից. զի Վախժանդ ունի եօն հազար, որք էին ասորին յախալաւանակալք, Գայոց, Իսլիմ, Արեւ, Ալիման, Դայանա, Զարէն, Արեւիտէ:

8 Անձամթօթ և ինձ Բարտամ անուն թագաւոր. որպէս և պատմեալն աստ ըմբանէ. յաշորդ Արտաշտի և կամ 'ի կարգի պայազատան նորին, որք համարին զկնի Արշակունի՝ Եսպուհ, Երեսն, Որվոզ, մու Եսպուհ, Կրման, Սաղկերտ, Աւագան, Սաղկերտ Բ, Պերզք, Վաղարշ, Կաւաւա, Նուշիրուան, մու Որվոզ. Խորով և Յազկերտ վերջն, առ որով բարձաւ թագաւորութիւն ամեն Ասասնեանց յԱրարացոց:

9 Յօր. Միքեան, որպէս և սերիք ուրիք գրի

չոգաւ 'ի Բաղդատ <sup>1</sup> բազմութեամբ զորաց, և յինքն առնուլ չանայր զթա-  
 դաւորութիւնն Պարսից՝ որպէս վաւագ  
 եղբայր: զի յօտարութեան կամ, ասէր,  
 և անհանգիստ 'ի մարտի խաղրայ, զի  
 մի սաց նոցա անցանել 'ի Պարսա, իսկ  
 եղբայր նորա նախատէր զնա՝ որպէս  
 զհարճորդի, և իւր ասէր անգ զթագա-  
 ւորութիւնն, զի հայրն՝ ձեռամբ իւրով  
 եզեալ էր զթագն 'ի գլուխ նորա, և  
 գրով հաստատեալ զնա յաթոռ իւր:  
 Ապա ետուն Միհրանայ զՋօղրէթ և  
 զկէս երկրին Շամայ <sup>2</sup>. և զԱտրպա-  
 տական և զՀայն և զՄովկան և զՌան  
 և զՀերթ, և հաստատեցին զոր յա-  
 ռաջադոյն ունէր: Եւ դարձաւ Միհրան  
 'ի կողմանս Օսեթայ, և գերեաց զնոսա.  
 քանզի լուաւ եթէ ասպատակեցին նո-  
 քա՝ ի վիրս, գիտացեալ զերթն նորա  
 'ի Պարսա: Եւ եհաս Միհրան մինչև  
 ցխաղարէթ, և դարձաւ ընդ կողմանս  
 Դուալեթոյ, և եկն 'ի Մցխիթայ: Չկնի  
 այսորիկ արչաւեցին խաղրբ 'ի Դար-  
 բանդն, և չոգաւ Միհրան ընդդէմ նո-  
 ցա կալ աւուրս բազումս:

Յայնմ ժամանակի որդին խոսրովու  
 Տրդատէս՝ քաջութիւն մեծ ցուցեալ 'ի  
 Յոյնս, և ըմբռնեալ անգ զթագաւորն  
 Գոթացւոց զնեղիչն Յունաց, և վասն  
 այսորիկ պսակեալ 'ի նոցանէ դառնայր  
 'ի հայրենիս իւր, և սատակէր զամե-  
 նայն օտարս՝ զորս գտանէր և զգորան  
 Միհրանայ: իսկ Միհրան երբք զազ-  
 գական իւր զՊերոզ յոչնութիւն իւր,  
 տուեալ նմա 'ի կնութիւն զդուստր  
 իւր, թերևս կարէր, զի մեծ տաղնապ  
 հասուցանէր <sup>3</sup> վրաց աշխարհին և ա-  
 մենայն Պարսից: Յաւուրսն յայնոսիկ  
 թագաւորէր երրորդ եղբայրն Միհրա-

նայ 'ի Պարսա. և առաքեաց առ Միհ-  
 րան՝ զի առեալ զկարողութիւնն իւր՝  
 զնասցէ ընդդէմ՝ 'ի Հայն և 'ի Յոյնս:  
 Եւ չոգաւ ընդ առաջ նմա ամենայն ու-  
 ժով իւրով, և կոտորեցին <sup>4</sup> ամե-  
 բոխ յոյժ, որ զանցանէր զչափով հա-  
 մարուս: Եւ մտին 'ի Հայն, և առին գերի  
 յլով: զի Տրդատ ոչ կարաց պատահել  
 նոցա՝ սակս բազմութեան նոցա, այլ  
 մնաց յամուրս <sup>5</sup> աշխարհին: իսկ նո-  
 ցա առեալ զՀայն՝ անցին յաշխարհն  
 Յունաց, քանդէին, կոտորէին, և ա-  
 ւար հարկանէին յանհոգս: Եւ թագա-  
 ւորն նոցա կոստանդիանոս ոչ կարէր  
 կուռել ընդ նոսա, և կայր 'ի մեծ տագ-  
 նապի: Յոյնժամ տեսիլ երազոյ ազգ  
 եղև նմա՝ եթէ պաշտեսցէ զխաչեալն  
 Աստուած՝ յողթեսցէ զօրութեամբ  
 խաչին՝ անհուն բանակի նոցա: Չոր և  
 արայն իսկ, և առաջնորդ արարեալ  
 զնչան խաչին՝ եկն 'ի վերայ, և եհար  
 զնոսա զօրութեամբն Գրիստոսի՝ կո-  
 տորմամբ սրոյ, մինչև յոյժ սակաւուք  
 մազապուր լինել թագաւորացն Պար-  
 սից և վրաց: Այլ Միհրան մտեալ յա-  
 մուրն Մցխիթայ, և գիտացեալ եթէ  
 կորեան ամենայն ընտիրքն վրաց և  
 Պարսից՝ խոր սրտմութիւն զգննոյր և  
 կայր 'ի աագնապի. և եկեալ 'ի միտս՝  
 յոյժ դեսպանս առ Մեծն կոստանդիա-  
 նոս, և խնդրէ 'ի նմանէ զհաշտութիւն,  
 զի ծառայեսցէ նմա. նոյնպէս և առ <sup>6</sup>  
 Մեծն Տրդատէս առաքեաց: Եւ լուան  
 նմա, և արարին խաղաղութիւն: կոս-  
 տանդիանոս էառ զորդին Միհրանայ  
 զԲահրն՝ պատանդ. և Տրդատ ետ  
 զդուստր իւր զՍողոմէ՝ որդւոյն Միհ-  
 րանայ՝ որ Բէուն <sup>7</sup> կոչէր՝ 'ի կնու-  
 թիւն, և նստաւ յՈլորմի:

Միհրան. կոչումն Միհրան և ըստ հնչման Պարսից,  
 իսկ Միհրան ըստ վրացւոց:  
 1 Արարի մարթից արեօք նոյն համարել  
 և ոչ որիչ գտեցին զայս 'ի ծանօթն Պաղտատայ,  
 հիմեկոյ զնին ութհարիւր ամաց յեա Քրիս-  
 տոսի:  
 2 Այն է Ասորոց, յանուանէ գլխաւոր քա-  
 ղաքին զերկիրն նշանակելով, ըստ արարական  
 կոչման:  
 3 Անորիչ է իմաստն թէ ով արեօք կարէր

և հասուցանէր զնրան, Պերոզ եթէ Տրդատ:  
 4 Յօր. Աբուլեյսն, որով եղծանին միտք բա-  
 նիցն: Առ պատմագիրս մեր չիք ուրեք յիշատա-  
 կութիւն պարսութեան Տրդատայ 'ի վրաց  
 կամ 'ի Հիւսիսայնոց:  
 5 Յօր. Յասուր:  
 6 Յօր. Յարմին չիք սո: Վախճանդ ասէ միշ-  
 նօրեկով Կոստանդիանոսի հաշտեալ Տրդատայ  
 ընդ Միհրանայ:  
 7 Բէվ՝ ըստ վախճանգայ:

ՎՂՈՒԽ Ը.

Պարտաւ Ս. Նուենայ 'ի վիրս, որոյ հար-  
ցեալ 'ի բարոնոնցն վրաց՝ մանրապատում  
ասանդի զվարաց իւրոց, և բէ սրդես ազղեալ  
'ի տակեան, 'ի հրումանէն Աստուծոյ եկեալ  
'ի վիրս՝ ազօրիք խորտակէ զկուս. յետ որոյ  
ասանդինն բնակելով յանձնօրս, յանախէ  
տօ Հրեայս Մցխեբայ, որք ընդ Արխարայայ  
քանտանոյի դասեն 'ի հաւատս. և զի յանոյ  
գայս ամենայն՝ հատուտայ 'ի Քրիստոս և ին-  
քինն բարոնին վրաց :

Յայնմ ժամանակի երանուհին Նու-  
նի՝ Մայրն վրաց եկն 'ի Մցխիթա, և  
եղև անդ ամիսս երիս : Եւ եհարց զնա  
թաղուհին վրաց Մողմոնի՝ <sup>1</sup> թէ ուս-  
տի իցէ : Եւ ասէ ցնա Նունի. Լուր 'ի  
սկզբանէ վասն իմ. էր երբեմն զի ազ-  
գըն Բրանկաց <sup>2</sup> կուէէին ընդ Հոռոմայ,  
և այր ոմն Չարողոն անուն կապաղով-  
կացի յողթեաց նոցա Քրիստոսի զօ-  
րով ինձամբն, և ըմբռնեաց զմագաւորն  
և զգօրան. և նոցա զարմացեալ խնդրե-  
ցին զչնորհս մկրտութեանն. զոր տը-  
ւեալ նոցա, արձակեցին յաշխարհն իւ-  
րեանց՝ լուսաւորեալս 'ի Քրիստոս : Գը-  
նաց և ինքն Չարողոն զկնի նոցա, և  
արար զազգն Բրանկաց քրիստոնեայ :  
Եւ եկն առ թագաւորն, և առեալ 'ի  
նմանէ բազում պարզես՝ չոգաւ յերու-  
սաղէմ պատուել զտուրք տեղինն : Եւ  
եզիտ անդ երկուս որոս, եկեալ 'ի  
կլաստրատայ զկնի մահուան ծնողաց

իւրեանց քրիստոնէից, անուն միոյն  
Յուրնաղ, և քեան իւրոյ Սուսան, որ  
ծառայէր զՆիոփոր <sup>3</sup> Բեղզայեմացի.  
և էառ Չարողոն զՍուսան՝ իւր 'ի կնու-  
թիւն, և զնաց 'ի կլաստատա քաղաք.  
և ծնայ ես 'ի նոյանէ : Եւ իմ եղեալ  
երկուսանամեայ՝ եկին յերուսաղէմ :  
և հայր իմ <sup>4</sup> չոգաւ յանապատս, զիս  
յԱստուած յանձնեալ և 'ի չորհոսն  
Քրիստոսի, զի նուիրեցայց կուսութե  
երկնաւոր փեսային : Եւ մտի ես 'ի սուն  
Նիոփորայ հայկազնոյ, 'ի Կունայ քա-  
ղաքէ, և սպասաւորեցի նմա զամս  
երկուս. և հանապազորդ անզեկանայի  
վասն տնօրէնութեանն Քրիստոսի Աս-  
տուծոյ մերոյ, և թէ որպէս եղև կա-  
տարումն, և ուր են պատանք թաղման  
Տեառն մերոյ : Եւ ուսուցին զիս եթէ  
դրեալքն 'ի մարգարէս լցան 'ի Տէրն,  
և խաչեցաւ և յարեաւ, և ել յերկինս  
և գալոց է : Եւ զպատանան կինն Պի-  
ղատոսի ինդրեաց, և հաւատաց 'ի  
Քրիստոս, և չոգաւ 'ի Պմնտոս 'ի սուն  
իւր. և զկնի ժամանակաց անկաւ 'ի  
Ղուկաս աւետարանիչ, և նա գիտէ  
զինչ արար : Եւ վարչամակն, ասնն,  
Պեարոս տարաւ ընդ իւր, և փորան-  
կեալ պատմուծանն եհաս ծմակոյին  
երկրին, և կայ 'ի քաղաքն Մցխեթոյ.  
և խաչն Տեառն յերուսաղէմ թաղեալ  
կայ, և յայնի՝ յորժամ կամի : Եւ իմ  
լուեալ զայս ամենայն՝ գնացի առ Պա-  
տրիարքն, և օրհնեաց զիս : Եւ չոգոյ  
'ի Հոռոմ <sup>5</sup>, թերևս զտից ինչ անդ մասն

1 Վերջիջեալն Սողոմէ՝ գուսար Տըրքատայ :  
2 Անձանթ է ազգն և աշխարհ Բրանկաց առ  
գրտուն. զորս Վասուշտ նոյն համարի ընդ  
Պարզէնուացին 'ի կարգաւորիս Ապանիոյ. և զ  
ընծայութիւնքն զորս առաջի ասնէ՝ որին իւրեք  
զօրեն 'ի հաստատութիւն կարծեացն. մինչքեռ  
մերձաւորութիւն հնձմանն Թուռի յիւրեացանել  
զՓասկիս : Գիրանաց յիւրանակ անէ մասե-  
նափրս և այլուր ուրեք ուրեք ի յաշխարհ-  
ութեան բանինն :  
3 Յօրինակին խառն գրի Նիոփոր և Նիսիփոր :  
4 Յօրինակին չիք ի՛ : Զագու յանապո, այն է՝  
և զե միայնկեաց :  
5 Ըմուտք ոմանք 'ի նորոց պատմագրաց և  
քննագատից, Թուրի ինձ եթէ իրաւամբ զՂու-  
փոսթեանս ոչ համարին եկեալս 'ի քաղաքէն  
Հոռոմայ 'ի Հայս, այլ յաշխարհէն Հոռովկա-

ցուց, 'ի մէջ անեւով առ 'ի հաւաստիս պատ-  
մականս՝ ընդ այլոց զօրաւորագուներց՝ և զբանս  
ինչ թղթոյ կայսերն առ Տըրքատ, աւանդեալ  
յԱղօտհանդէպէս. յորում գրէ կայսրն առ  
Տըրքատ զի չէ նմա հնար գտանել 'ի մէջ Յունաց  
աշխարհին զժամանամանն Հռիփսիմեայ. այս բանք  
թերևս հաւաստացուցին զեղ թեականութեան  
կամ վանաց երեքսորիւր կուսանացն Հռիփսի-  
մեանց գտանելոյ յաշխարհին Յունաց և ոչ 'ի  
Հոռով, ուստի անմտութ իմն էր գողցես 'ի կայ.  
սերական քաղաքէն փախչել այնքան կուսանաց,  
որք յիշին յիսնիւ յափ 'ի պատմագրաց և յայ-  
լոց եօթնասունն Թուռով, ընդ Հռիփսիմեայ և  
Գայնանայ, և ասանց յայտնի լինելոյ՝ գալ  
մինչ. 'ի Հայաստան, զերծեալք 'ի վասնպատ  
ծովու և ցամաքի :

'ի շնորհացն ֆրիստոսի. և զերեսս իմ հաստատեալ 'ի յոյն կենդանի՝ գորի զվանան Պոզուսի, յորում՝ բնակէին կուսանք անձինք երեքարիւր: Եւ յարեաւ անդ 'ի մեր վերայ փորձանք, և եկաք 'ի Հայս: Եւ յլեաց կայսրն թուղթ առ Տրդատ. և արարեալ խնդիր, գտին զմեզ 'ի հնձանս այգեաց: Եւ ջանս եզեալ թագաւորն՝ ոչ կարաց հարսնացուցանել ինքեան զհարսն ֆրիստոսի Հոփսիմէ. և սուր եղեալ կատորեաց 'ի մէջ՝ երեսուն և եօթն ողիս. և այլքն ցրուեցան: Եւ մնացի ես 'ի ներքոյ վարդենեաց՝ որ ոչ էր ծաղկեալ. և ամբարձեալ զաչս 'ի վեր՝ տեսի զհօդիս սըրբոցն, զի գնային ընդ երկինս: Եւ զօրպետ մի էր կրօնաւոր, զօրք հրեղինք գայր ընդ առաջ, ունելով բուրվառ 'ի ձեռին իւրում. և 'ի բուրմանէ խընկոցն լցան տիեզերք. և խնկարկեալ սրբոցն՝ դառնայր նորք անդրէն, և մտանէին 'ի ներքս կողմ վարագորին: Եւ իմ աղաղակեալ առ Տէր, ասեմ. Ընդէր թողեր զիս աստէն, տէր իմ Յիսուս: Եւ ասացաւ առ իս. Մի երկընչիր, զի ընդ նոյն ելանելոց ես առքորսն քո. այլ արի գնա դու 'ի կողմն հիւսիսի, ուր հաւնձք բազում են և մըշակ ոչ գոյ. և զկնի սուգ ժամանակի թուփզ այդ փշալի՝ ծաղկեալ փթթի վարդիք: Եւ իմ յարուցեալ եկի յիւր բանիս Հայոց, և ձմերեալ անդ, և 'ի յունիս ամսեան եկի 'ի լեռան ճաւախեոյ. և 'ի ծովն փառնաւայ եկեալ տեսի անգ ձկնորս 'ի ծովուն, և հսվիւս առ եզր ծովուն. և լուայ՝ զի երգնուին յԱրամազդն և 'ի Չաղէն. զի տեղեակ էի լեզուին Հայոց, ուսեալ 'ի տանն Նիոփորայ Դոնացոյ: Եւ հարցեալ զուստին՝ ասին. Ի Դարբայ, 'ի Լրբայ, 'ի Սափուրայ, 'ի Քինձերոյ, յԵֆապատէն Մցխեթոյ. ուր չաստուածք փառաւորին <sup>1</sup>, և թագաւորք թագաւորեն. և գետս այս որ ելանէ 'ի

ծովէն՝ անդր երթայ: Եւ իմ առանձնացեալ եղի զզուլս իմ և ննջեցի. Եւ տուաւ ինձ գիր մի հոռոյներէն կընքեալ մատանեաւ. և զիր կնքոյն էր անուն Յիսուսի ֆրիստոսի: Եւ ասէ ցիս այլն՝ որ ետ ցիս զթուղթն. Արի գնա և քարոզեա՝ զոր ինչ գրեալ է այդր: Եւ ասեմ ցնա. Ո՛վ եմ ես, կին մի անգէտ և տկար: Եւ ասէ ցիս. Ի շնորհս քրիստոնէութեան և յաշխարհն կենաց, որ է վերինն Երուսաղէմ, ոչ է անդ արու և էգ. և տկարութիւն և աղիտութիւն ոչ ասի, քանզի ֆրիստոս Աստուծոյ զօրութիւն և Աստուծոյ իմաստութիւն է. և Մարիամ Մազզաղենացին քարոզեաց զյարութիւնն ֆրիստոսի՝ առաքելոցն և այլց բազմաց, և ոչ եղև ամօթ ինչ ասողին և կամ լսողացն: Եւ բացեալ զգիրն՝ էր անդ կարճառու գրեալ զամենայն զօրութիւն աւետարանին, 'ի տասն բան բովանդակեալ: Եւ իմ ընթերցեալ և իմաստնացեալ՝ զարթեալ. և խնդրեալ 'ի Տեառնէ, եկի զկնի գետոյն յարեմոփց կուսէ, մինչ դարձաւ ջուրն ընդ արեւելս. և հասի յիւրբնիս, և եղէ անդ ամիս մի. և զկնի վաճառականաց եկի 'ի Մցխեթա: Եւ յաւուր տօնի Արամազդայ՝ զկնի թագաւորին և ամենայն ժողովրդեանն. և տեսի անգ այր մի՝ պղնձի զրահ և սուղաւարտ զգեցեալ ոսկի, երկու ակամբք զմիջխորիք և միով բիւրղլու զարգարեալ, սուսեր 'ի ձեռին իւր ունելով որպէս փայլակն, և չարժէր զնա՝ ահառնելով ժողովրդեանն: Եւ նոքա սարսէին և ասէին. Վայ մեզ, թէ սխալեսք 'ի զոհն կամ մեղսք բանիւ ընդ Հրէի կամ ընդ մոզուց, և մեռանելոց եմք յԱրամազդայ: Եւ կայր ընդ աջմէ նորա պատկեր ոսկի՝ անուանեալն Փաշայ <sup>2</sup>, և 'ի ձախմէ նորա պատկերն արծաթի՝ կոչեցեալն Փայիմ: Եւ յիշեցի զբանն Յուզնապայ պատրիարքին

<sup>1</sup> Եօր. Փառասելիս:  
<sup>2</sup> Նոյն է՝ զոր յառաջն Փայիմ անուանեաց: Սեփական իմն մըլութիւն է թարգմանին և

կամ ընդօրինակողի պատմութեանս՝ ազգի ազգի ծեփծեփմամբ խեղճութիւրէլ զմի և նոյն անուն:

Երուսաղեմի, որ ասաց ցիս, եթէ հասանելոց ես 'ի յերկիր պատերազմողաց ճշմարտին Աստուծոյ. և յագոց ելեալ լացի, և հայցեցի յԱստուծոյ ողորմութիւն 'ի վերայ մուրեկոյն, և ասացի. Աստուած հօր և մօր իմոյ, սաստեա դիւայեալ պատկերացս այտօցիկ, և կորո զսոսա, զի ծանկնն գեղ միայն ճշմարիտք Աստուած: Եւ եղև յանկարծակի հողմն սաստիկ, և բարբառ որոտման, և արկուածք շան լից և կարկուտ 'ի կշիռս լտեր, և հոտ գարշ և զազիր, և խաւար թանձրամած, և արար աներեկոյթ զպատկերան. և ցրուեցան ամբոխն, և մտին 'ի թաքուստ: Եւ յաւուրն երկրորդի ելեալ արտաքս թագաւորն և ամենայն ժողովուրդն, խնդրէին զպատճառս իրացն զտանել: Յայնժամ ասէին ոմանք. ֆաղ դէսցուց աստուածն թրուշան և մերն Արամազ թշնամիք են 'ի սկզբանէ. և երբեմն մեր աստուածն կորոյս գնա ջրով, և արգ նա էառ զվրէժն: Եւ կէպք զճշմարիտն ասէին, թէ Մեծ Աստուածըն՝ որ եհար զթագաւորն Հայոց, և դարձեալ բժշկեաց Հայաստանը հանդերձ, նա արար սքանչելիսս զայս: Եւ իմ գտեալ զսկն բիրեղ՝ եկի առ ծառոցն Բանչի, զոր ասնէ Հովանի բարտմոյս արքայի, և արթեցի անդ վեց օր: Եւ 'ի յաւուր մեծի Գունափոխութեան Տեառն, յորժամ եցոյց Տէրն զպատկերն Հօր՝ զլիսաւորաց առաքելոց և մարդարէիցն, եկն առ իս աղախին մի արքունի Շուշան անուն, և սեւ սեալ զիս՝ զարմացաւ. և ածեալ թարգման հոռմոյերէն՝ եհարց զիս, զթալով 'ի վերայ իմ՝ որպէս յօտարի. և կամեցաւ տանել զիս յարքունիս: Եւ ես ոչ գնայի ընդ նմա. այլ գնացեալ անտի գտի կին մի Անաստու՝ կոչեցեալ, որ էր ամուսին առն՝ որ պահէր զբարաստանն արքունի, և բնկալաւ զիս խնդութեամբ. և եղէ 'ի տան նոցա

զինն ամիս: Եւ ոչ զոյր նոցա զուակ, և վասն այնորիկ էին 'ի մեծի արտմութեան: Եւ այր մի լուսաւոր ասէ ցիս. Մո՛ւտ 'ի բուրաստանդ, և յարմատոյ շոճի թփոյն առ վարդենեզըն՝ առցիս հող, և տայես դոյս ուսել յանուն Տեառն, և տայի դոցա զուակ: Եւ առարի այնպէս. և ետու նոցա յանուն Յիսուսի Բրիսաոսի Աստուծոյն Սարայովայ, որ եկն խոնարհութեամբ, և դալոց է փառք իւրովք զատել զաշխարհս ըստ արժանեաց: Եւ նոցա լուսաւոր հաւատացին 'ի Բրիսաոսի, և առին զխոստացեալ զմանուկն: Եւ իմ ելեալ 'ի տանէ նոցա, և արտաքայ պարսպին 'ի պրակս մոշնեաց արարի ինձ դադարս. և անդ կոչցի ամս երիս. խաչ մի ձևացուցեալ՝ երկրպագէի առաջի նորա սրբոյ Երրորդութեանն 'ի տուէ և 'ի գիշերի: Եւ օր ըստ օրէ գնայի առ Հրեայսն՝ սակս լեզուոյն, և 'ի տեղեկութիւն՝ Տեառն պատմուճանին: Եւ քահանայն Արիաթար, և դուստր՝ իւր Սիդոնա հաւատացին 'ի գալուստն Բրիսաոսի, և վեց կին հրեայ ընդ նոսա. և հարցեալ ուսցիս յԱրիաթարայ ըզճշմարտութիւնն:

Եւ զայս ամենայն լուեալ իմաստուն թագուհին՝ զարմանայր և հաւատայր ասացելոյն: Եւ յորժամ լուաւ զմեծ սքանչելիսն, որ եղև առ հայրն իւր Տըրդատիոս, առաւել ես հաստատէր 'ի հաւատս, և փառաւորէր զԱստուած յանպատում՝ փառս իւր:

ԳԼՈՒԽ Թ.

Պատմ Արիստար քահանայ բէ որպէս զիր ընկալեալ զԲրիսաոսէ 'ի Հրէից Անտիոքոյ, և ստուգեալ 'ի կատարմանէ ասորցն եւանակից 'ի Գաւթիկէ, և յուսալ 'ի Ս. Նունեայ՝ մկրտեալ հաւատաց 'ի Բրիսաոսս: — Խրեղրիսալ 'ի յսողոցն պատմե գտօրէնութեան Բրիսաոսի, և զերրայոյ իւրոյ ընդ այոց ուսեց յԵրուսաղեմ, և բնիկոյ ընդ իւրեանս բզպատունուան Տեառն: — Չայոցեալ Հրէից՝ միւսն իւնկրեղ քարկոծել զնս, սանճանարին 'ի հրամանէ քաղապրին, որ դիտորին սանէ քրիստոնէից:

1 Վախժանգ գնէ Աստուծոս:  
 2 Վախժանգ ունի. Եւ ինչ նորա Սիբուս. որ ոչ թուի ուղիղ, քանզի սուղ ինչ գնի ինքնին Արիսաթար 'ի բանս իւր գուսար կոչէ ինքեան զՍիբուս:

Իսկ քահանայն Արիւթար պատմեաց 'ի լուր ամենեցուն՝ զայս ձև օրինակի բանի. եթէ, Յամին յորում եկն սուրբն Նունի 'ի Մշխիթա՝ քահանայ էի ես վիճակու ազգին իմոյ. և բերաւ առ իս գիր յԱնտիոքայ 'ի Հրէից անտի՝ որ անդ կային, եթէ լծագաւորութիւնս հերձաւ ընդ երես, և իշխեն մեզ Հոսովք և Յոյք և Հայք. և լռեցին մարգարէքն մեր, և քանդեցաւ տաճարն մեր: Եւ զայս գիտեմք 'ի զրոց, զի յորժամ մեզանչէին հարքն մեր, Աստուած բարկանայր, և տայր զնոսա 'ի գերութիւն. և յորժամ զփորձն տեսեալ զզմանային, և կարգային առ Տէր աղօթիւք՝ հաշտէր Աստուած, և առնէր նոցա զարձ և ողորմութիւն. և եթէն անգամ եղև այս յաւուրսն առաջինս: Իսկ յորմէհտէ խաչեցին հարքն մեր զորդին աքրատ կնոջն տառապելոյ՝ զանուանեալն Քրիստոս, այս երեքհարիւր ամբ են՝ զի բարկութիւն Տեառն յաճախէ 'ի մեզ, և աղաղակեմք առ նա զցայտ և զցերեկ, և ոչ տայ մեզ պատասխանի, ոչ հաշտի ընդ մեզ: Աստի իմանալ արժան է եթէ նա է Որդին Աստուծոյ, նկատեալն յօրինոյ և 'ի մարգարէից: Եւ դու տես և քննեա իմաստութեամբ քո 'ի ծանօթութենէ զրոց՝ եթէ որպէս կատարեցին ամենայն զբնաքն, և յերկնից էր մարդն այն ստուգապէս: — Իսկ ես 'ի արտմութեան մեծի եղեալ զբազում աուուրս, և ապա խընդրեալ զիրս՝ գտի զժամանակն նշանակեալ 'ի Դանիելէ՝ 'ի զլուխ ելեալ առ Օգոստոսիւ կայսերն Հոսմայեցոց: Եւ մինչ յայստակ էի ես՝ տեսի զսուրբն Նունի, և տեղեկացեալ լուայ 'ի բերանոյ նորա զբանս զրոց մերոց մարգարէից, և զորպիսութիւն անօրէնութեան նորա կարգաւ, զամենայն՝ 'ի ծննդեանէն մինչև ցհամբառնալն յերկինս. և հաւատացի ստուգութեամբ՝ եթէ նա էր յոյսն հեթմանոսաց, և փրկ

կութիւն ժողովրդեան իմում Իսրայելի: Եւ ահա եղաք արժանի ես և զաւակս իմ ջրոյ Նիերապոյ՝ որ է Բեթղաէմի, որում ցանկացեալ Դաւթի, և ոչ եհաս. և յիշեաց զմեզ Տէր ընդ հաճոյս ժողովրդեան իւրոյ, և այց արար մեզ 'ի փրկութեան իւրում, և բնակեցաւք մեք 'ի տան Տեառն, զի յաւտե նից օրհնեսցուք զՏէր, քանզի զմեզ երանեաց սուրբն Դաւիթ. և տացէ ինձ Աստուած և այլ սքանչելիս և բարութիւնս տեսանել 'ի քաղաքիս 'ի ձեռն սրբուհոյն Նունեայ:

Եւ զուարճացեալ լսողայն՝ տեսն ցԱրիւթար. Չոր ինչ գիտես յաղագս այգորիկ՝ պատմեա մեզ: Եւ ասէ ցնոսա. Լուսք մեք 'ի հարցն մերոց, զոր պատմեալ էին հարքն նոցա, եթէ յաուրս Հերովդի արքայի՝ եկն համբաւ առ Հրեայն Մշխիթոյ, եթէ լծագաւորք 'ի Պարսից եկեալ առին զերուսաղէմ, և քահանայքն Բուդայոյ և Կօդի, Եղարայիքն զպիւք, և կանանայիք թարգմանիք զիմեցին փախստեամբ յարեւելս, և 'ի սուգ մտին ամենայն Հրեայք: Որ և զկնի սակաւուց հնչեաց լուր աւետեաց եթէ Պարսիկքն՝ որ յերուսաղէմ, ոչ եկին 'ի պատերազմ, այլ յերկրպագութիւն կուսորդոյ միոյ՝ ծնելոյ 'ի զուակէ Դաւթի, առաջնորդունելով 'ի յերկնից ասող բանական և իմաստուն. զոր դտեալ յանապատի՝ փառաւորեցին զնա իբրի վԱստուած. զի փոխանակ զինուց պատարագս ունէին ընդ ինքեանս, ոսկի արքունական և զմուս բժշկութեան և կնորուկ նրէր Աստուծոյ. և զայստակ մատուցեալ մանկանն՝ զնացին: Եւ լուեալ զբանս ազգին Հրէից՝ խնդացին յարախութի մեծ: Եւ զկնի ամաց երեսնից եկն գիր յերուսաղեմէ յԱննայէ քահանայէ առ հայր՝ մօրն իմոյ՝ յելիոս, եթէ ընծալ յեալն՝ ասէ զանձն Որդի Աստուծոյ. եկայք, որ կարողք էք, զի կատարես

1 Թեբեա Քամարազոյն լիցի ասել առ կուսորդիս, քանզի որպէս մարթ է զպապ Արիւթարու ժամանակից ասէ Քրիստոսի, մինչ

զեռ 'ի մահուանէ Քրիստոսի ցԱրիւթար գտանի միջոց երեքհարիւր ամաց:

ցուք առ նա զօրէնսն Մովսիսի՝ սպա-  
նանելով զնա: Եւ չողաւ ելիոս քահա-  
նայն՝ հմուտ օրինայն, ՚ի ցեղէն եղիա-  
զարու, յազգէ տանն Հեղեայ. և ունէր  
նա մայր ՚ի նոյն ազգէ, որ պատուի-  
րեաց նմա և ասէ. Մի հաղորդիր, որ-  
դեակ, խորհրդոց Հրէիցն. քանզի  
պատգամն մարգարէից և առակ օրի-  
նաց, և բանն Աստուծոյ կենդանայ՝<sup>1</sup>  
Գնաց ընդ նմա և Ղունկիանոս կարա-  
նացի. և երթեալ՝ զիպեցան աւուրն  
խաչելութեան: Եւ իբրև պատանիին <sup>2</sup>  
պնդեաց զբեկեան, զմայր իլիոսի ընդ-  
ոստոյց <sup>3</sup> մասն մարգարէութեան՝ որ  
՚ի նմա, և ասաց. ՚ի խաղաղութիւն հե-  
թանոսաց՝ թագաւորդ իսրայելի, փրբ-  
կիչ աշխարհի. և երիցս, վայ ձեզ՝ սպա-  
նողք արարչին ձերոյ <sup>4</sup>. այլ լինայեա ՚ի  
մեզ, տէր Աստուած մեր: Եւ հանգեալ՝  
՚ի Քրիստոս հաւատացեալ նոյն ժա-  
մայն: Իսկ փորանկեալ պատմուածանն  
վիճակաւ հասեալ եղև Մցխիթայ Հրէի-  
ցըս. և առեալ իլիոս՝ եւբեր զնա ՚ի  
տուն իւր: Եւ ընդ առաջ երթեալ քոյր

նորա՝ առեալ համբուրէր, և զնէր ՚ի  
վերայ լանջայն, և ասանդէր զհոգին՝  
Քրիստոսի, երիս ունելով պատճառ,  
զմահն Տեառն, և զօրն մահն, և զեղ-  
բօրն միաբանիլն ընդ Հրեայնս: — Եւ  
Ագրիկ էր թագաւոր Վրաց, լուեալ  
պանչացաւ, բայց ոչ կամեցաւ առ ին-  
քըն ունել զպատմուածան մեռելոյն. և  
պահեցին զնա ՚ի ներքոյ նոճի ծառոյն՝  
որ բերեալ էր զտունկ նորա ՚ի Լիբա-  
նանէ: Եւ ասա տունն իլիոսի, որ կայ  
յարևմտից Մոզթայ կամրջին:

Իբրև լսէին զայս ամենայն Հրեայքն՝  
ամաչէին յանձինս իւրեանց, և խոր-  
հեցան քարկոծել զնա. քանզի կորովի  
իմաստութեամբն իւրով ՚ի Հին կտա-  
կարտնաց անտի ճշմարտէր զաստուա-  
ծութիւնն Քրիստոսի, ընդ Հօր և ընդ  
Հոգւոյն փառաւորել: Եւ լուեալ թա-  
գաւորին զաղմուկ Հրէիցն՝ սաստեաց  
նոցա. և հրամայեաց մի արգելուլ զքա-  
րողութիւնն զայն յաշխարհէն իւրմէ.  
Քանզի լուեալ էր զհրաշան՝ որ եղև ՚ի  
Հայս և ՚ի Հռոմս:

1 Այս է՝ Քրիստոս և պատգամն մարգարէից  
և առակեան յօրէնս և ինքնին բանն Աստուծոյ:  
2 Անծանօթ է ինձ նշանակութիւն բառիս,  
զոր անտեղի համարիմ անուն յաստուկ անել-  
նշանակիցէ թերևս գւղի՞ք, և կամ մանաւանդ  
բէնուոյ, առեալ ՚ի յունէն Παναγιώτος.

3 Յօր. Ընդ ոստոյց:  
4 Պրատէ թարգմանէ. Եւ երիցս յաւել. Վայ յեւ.  
և այլն: Ըստ Վախթանգայ մայրն Ղլիոսի ՚ի  
Մցխիթա կայով՝ լուաւ զձայն բեկեւելոյն ըզ-  
Քրիստոս ՚ի թաշին յԵրուսաղէմ, և հաւատաց  
՚ի նա:

Կր շարունակելի.

Հ Ա Մ Ս Ռ Օ Տ Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԱՆՂՆԱՐԻՆ ԿՈՏՈՐՈՒՅԻՔ ԱԻԵՐՄԱՆ ՏՓԻԻԾ ՔՐԱՎՔԻ

զոր արար յելուզակօրէն պատերազմաւ Աշա ՄԵՆՃԱՄԷՏ Խանն, փախուցեալ  
գճերունի արքայն Վրաց գՀերակկ Բ, յամի Տեառն 1798:

Յաւուրս թագաւորութեան կոս-  
տանդնուպօլսոյ Սուլթան Սէլիմի ԳԻ,  
և ինքնակալութեան Ռուսաց Նեքտա-  
ռինեայ կայսրուհւոյն, ՚ի չորրորդ ամի  
աղգովին ապստամբութեան Գազզիա-  
ցւոց, Խան ոմն ծեր, որ իշխէր ՚ի խո-

րին Պարսիկս ՚ի նահանգս ինչ, յա-  
նուն Աշա ՄԵՆՃԱՄԷՏ Խան ներքինի,  
խորագէտ յոյժ, խորհեցաւ ՚ի միտս  
թագաւորել համօրէն Պարսկաստանի  
և անուանիլ Շահ: Սկսաւ ժողովել զօրս  
բազում յոյժ. և կոչեալ զըրջակայ Խանս